

## **ՓԱՐԻԶԻ ԽԱՐՏԻԱՆ ՆՈՐ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ**

Եվրոպայում անվտանգության ու համագործակցության խորհրդաժողովի (ԵԱՀԽ) մասնակից պետությունների կամ դրանց կառավարությունների ղեկավարների հանդիպում. Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Կանադա, Կիպրոս, Չեխիայի և Սլովակիայի Դաշնային Հանրապետություն, Դանիա, Ֆինլանդիա, Գերմանիա, Հունաստան, Վատիկան, Հունգարիա, Իսլանդիա, Իռլանդիա, Իտալիա – Եվրոպական համայնք, Լիխտենշտեյն, Լյուքսեմբուրգ, Մալթա, Մոնակո, Նիդերլանդներ, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սան Մարինո, Իսպանիա, Շվեդիա, Շվեյցարիա, Թուրքիա, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն, Միացյալ Թագավորություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ և Հարավսլավիա:

Փարիզ, 1990 թվականի սեպտեմբերի 19-21

### **Ժողովրդավարության, խաղաղության և միասնության նոր դարաշրջան**

Մենք՝ Եվրոպայում անվտանգության ու համագործակցության խորհրդաժողովի մասնակից պետությունների կամ դրանց կառավարությունների ղեկավարներս, հավաքվել ենք Փարիզում մեծ փոփոխությունների ու պատմական ակնկալիքների ժամանակաշրջանում: Ավարտվեց Եվրոպայում առճակատման ու պառակտման դարաշրջանը: Մենք հայտարարում ենք, որ այսուհետև մեր հարաբերությունները հիմնվելու են հարգանքի ու համագործակցության վրա:

Եվրոպան ձերբազատվում է անցյալի ժառանգությունից: Տղամարդկանց ու կանանց քաջությունը, ժողովուրդների կամքի ուժն ու Հելսինկյան եզրափակիչ ակտի գաղափարների զորությունը Եվրոպայում ժողովրդավարության, խաղաղության և միասնության նոր դարաշրջան բացեցին:

Մերն է այն հույսերի ու ակնկալիքների իրականացման ժամանակը, որոնք տասնամյակներ շարունակ մեր ժողովուրդները փայփայում էին իրենց սրտերում. մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների վրա հիմնված հաստատական նվիրվածություն ժողովրդավարությանը, բարգավաճում՝ տնտեսական ազատության ու սոցիալական արդարության միջոցով, և հավասար անվտանգություն մեր բոլոր երկրների համար:

Եզրափակիչ ակտի տասը սկզբունքները մեզ կառաջնորդեն դեպի այդ տենչալի ապագան՝ այնպես, ինչպես դրանք վերջին տասնհինգ տարում լուսավորում էին հարաբերությունների բարելավման մեր ուղին: ԵԱՀԽ-ի առջև ստանձնած բոլոր պարտավորությունները լիովին կատարելը պետք է ներկա նախաձեռնությունների հիմքը հանդիսանա, որպեսզի մեր ժողովուրդներին հնարավորություն տանք ապրելու իրենց իդեալներին համապատասխան:

### **Մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և իրավունքի գերակայությունը**

Մենք պարտավորվում ենք կառուցել, զարգացնել և ամրապնդել ժողովրդավարությունը՝ որպես մեր երկրներում կառավարման միակ համակարգ: Այս նախաձեռնության մեջ մենք կառաջնորդվենք հետևյալով.

Մարդու իրավունքներով ու հիմնարար ազատություններով օժտված են բոլոր մարդիկ՝ ծնվելու պահից, այդ իրավունքներն անօտարելի են ու երաշխավորվում են օրենքով: Կառավարության առաջնահերթ պարտականությունն է դրանք պաշտպանելը և խթանելը: Այդ իրավունքներն ու պարտականությունները հարգելը կարևոր երաշխիք է ընդդեմ չափազանց մեծ իշխանությամբ օժտված պետության: Դրանց կիրառումն ու ամբողջական իրականացումն ազատության, արդարության և խաղաղության հիմքն են:

Ժողովրդավարական կառավարումը հիմնվում է ժողովրդի կամքի վրա, որը կանոնավոր կերպով դրսևորվում է ազատ և արդար ընտրությունների միջոցով: Ժողովրդավարության հիմքում մարդու անձի, ինչպես նաև իրավունքի գերակայության հանդեպ հարգանքն է: Ժողովրդավարությունը արտահայտվելու ազատության, հասարակության բոլոր խմբերի հանդուրժողականության և յուրաքանչյուր մարդու համար հավասար հնարավորությունների լավագույն երաշխիքն է:

Ժողովրդավարությունն, իր ներկայացուցչական և բազմակարծիք բնույթով, ենթադրում է հաշվետվողականություն ընտրողների առջև, պետական իշխանությունների՝ օրենքներին ենթարկվելու պարտավորություն և անաչառ արդարադատություն:

Ոչ ոք օրենքից վեր չէ:

Մենք հաստատում ենք, որ յուրաքանչյուր ոք, առանց որևէ խտրականության, իրավունք ունի.

- մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքների ազատության,
- կարծիք արտահայտելու ազատության,
- միավորման և խաղաղ հավաքների ազատության,
- տեղաշարժման ազատության:

Ոչ ոք չի ենթարկվի.

- կամայական ձերբակալման կամ կալանավորման,
- խոշտանգումների կամ այլ՝ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Յուրաքանչյուր ոք նաև իրավունք ունի.

- իմանալ իր իրավունքներն ու գործել դրանց համապատասխան,
- մասնակցել ազատ և արդար ընտրությունների,
- արդար և հրապարակային դատաքնության՝ հանցանք կատարելու մեջ մեղադրվելու դեպքում,

▪ ունենալ սեփականություն՝ միանձնյա կամ համատեղ, ինչպես նաև զբաղվել անհատ ձեռնարկատիրությամբ,

- օգտվել իր տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից:

Մենք հաստատում ենք, որ ազգային փոքրամասնությունների էթնիկական, մշակութային, լեզվական ու կրոնական ինքնությունը կապալանվի, և որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն ունեն այդ ինքնությունն ազատորեն դրսևորելու, պահպանելու և զարգացնելու իրավունք՝ առանց որևէ խտրականության և օրենքի առջև լիակատար հավասարության պայմաններում:

Մենք կապահովենք, որ յուրաքանչյուր ոք իր իրավունքների ցանկացած խախտման պարագայում օգտվի իրավական պաշտպանության ազգային կամ միջազգային արդյունավետ միջոցներից:

Սույն դրույթներն ամբողջությամբ կիրառելն այն հիմքն է, որի վրա մենք կձգտենք նոր Եվրոպա կառուցել:

Մեր պետությունները կհամագործակցեն և միմյանց կաջակցեն՝ ժողովրդավարական նվաճումներն անշրջելի դարձնելու նպատակով:

### **Տնտեսական ազատություն և պատասխանատվություն**

Տնտեսական ազատությունը, սոցիալական արդարությունն ու շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքը աներկբա անհրաժեշտություն են բարգավաճման համար:

Անհատի ազատ կամքը, որն իրագործվում է ժողովրդավարության պայմաններում և պաշտպանվում իրավունքի գերակայությամբ, տնտեսական ու սոցիալական հաջող զարգացման անհրաժեշտ հիմքն է: Մենք կխրախուսենք այնպիսի տնտեսական գործունեություն, որը հարգում և բարձր է պահում մարդկային արժանապատվությունը:

Ազատությունը և քաղաքական բազմակարծությունը մեր ընդհանուր նպատակի՝ տնտեսական կայուն աճի ուղղությամբ շուկայական տնտեսության զարգացման, բարգավաճման, սոցիալական արդարության, զբաղվածության ավելացման և տնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման անհրաժեշտ տարրերն են: Այդ ուղղությամբ ջանքեր գործադրող երկրների հաջող անցումը շուկայական տնտեսության կարևոր նշանակություն ունի և բխում է բոլորիս շահերից: Դա մեզ հնարավորություն կտա հասնելու բարեկեցության ավելի բարձր մակարդակի, ինչը մեր ընդհանուր նպատակն է, և մենք կհամագործակցենք այդ ուղղությամբ:

Շրջակա միջավայրի պաշտպանությունը մեր բոլոր երկրների համատեղ պարտականությունն է: Պաշտպանելով այդ բնագավառում ազգային ու տարածաշրջանային մակարդակներով ձեռնարկվող ջանքերը՝ մենք պետք է նկատի ունենանք նաև ավելի լայնածավալ համատեղ գործողությունների անհետաձգելի անհրաժեշտությունը:

### **Բարեկամական հարաբերություններ մասնակից պետությունների միջև**

Այժմ, երբ Եվրոպայի վրա նոր դարաշրջանի արշալույսն է բացվում, մենք լի ենք վճռականությամբ՝ ընդլայնելու և ամրապնդելու բարեկամական հարաբերություններն ու համագործակցությունը Եվրոպայի պետությունների, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Կանադայի միջև, ինչպես նաև նպաստելու մեր ժողովուրդների բարեկամությանը:

Ժողովրդավարությունը, խաղաղությունն ու միասնությունը Եվրոպայում պահպանելու և ամրապնդելու նպատակով մենք մեր լիակատար հավատարմությունն ենք հայտնում Հելսինկյան եզրափակիչ ակտի տասը սկզբունքներին: Մենք հաստատում ենք այդ տասը սկզբունքների անանց արժեքը և դրանք իրագործելու մեր վճռականությունը: Բոլոր սկզբունքները կիրառվում են միատեսակ և անվերապահորեն՝ դրանցից յուրաքանչյուրի մեկնաբանության դեպքում հաշվի առնելով մյուսները: Դրանք են մեր հարաբերությունների հիմքը:

Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ և Հելսինկյան եզրափակիչ ակտով ստանձնած մեր պարտավորություններին համապատասխան՝ մենք վերահաստատում ենք մեր այն հավաստիացումները, որ ձեռնպահ կմնանք որևէ պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուժի կիրառումից կամ ուժի կիրառման սպառնալիքից, կամ ցանկացած այլ գործողությունից, որն անհամատեղելի է այդ փաստաթղթերի սկզբունքներին ու նպատակներին: Մենք հիշեցնում ենք, որ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունները չկատարելը միջազգային իրավունքի խախտում է:

Մենք վերահաստատում ենք վեճերը խաղաղ միջոցներով կարգավորելու մեր պարտավորությունը: Մենք որոշում ենք ստեղծել մասնակից պետությունների միջև հակամարտությունները կանխելու և կարգավորելու մեխանիզմներ:

Եվրոպայի պառակտման ավարտով մենք կձգտենք նոր որակ հաղորդել անվտանգության ոլորտի մեր հարաբերություններին՝ ամբողջությամբ հարգելով յուրաքանչյուրի ընտրության ազատությունն այդ բնագավառում: Անվտանգությունն անքակտելի է, և մասնակից յուրաքանչյուր պետության անվտանգությունն անխզելիորեն կապված է մնացած բոլորի անվտանգության հետ: Ուստի, մենք պարտավորվում ենք համագործակցել մեր միջև վստահությունն ու անվտանգությունն ամրապնդելու և սպառազինությունների վերահսկմանն ու զինաթափմանն օժանդակելու ուղղությամբ:

Մենք ողջունում ենք իրենց հարաբերությունների բարելավման վերաբերյալ քսաներկու պետությունների համատեղ հայտարարությունը:

Մեր հարաբերությունները հենվելու են ժողովրդավարական արժեքներին, ինչպես նաև մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին մեր ընդհանուր նվիրվածության վրա: Մենք համոզված ենք, որ մեր պետությունների խաղաղության և անվտանգության ամրապնդման համար ժողովրդավարության զարգացումը և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքն ու այդ իրավունքներն արդյունավետորեն իրականացնելն անհրաժեշտություն են:

Մենք վերահաստատում ենք ժողովուրդների իրավահավասարությունը և ինքնորոշման նրանց իրավունքը՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության ու միջազգային իրավունքի համապատասխան նորմերի համաձայն, ներառյալ այն նորմերը, որոնք վերաբերում են պետությունների տարածքային ամբողջականությանը:

Մենք լի ենք վճռականությամբ՝ աշխուժացնելու քաղաքական խորհրդակցություններն ու ընդլայնելու համագործակցությունը տնտեսական, սոցիալական, բնապահպանական, մշակութային և մարդասիրական խնդիրների լուծման հարցում: Այս ընդհանուր վճռականությունը և մեր աճող փոխկախվածությունը կօգնեն հաղթահարել տասնամյակներ շարունակ գոյություն ունեցող անվստահությունը, ամրապնդել կայունությունն ու կառուցել միասնական Եվրոպա:

Մենք ցանկանում ենք, որ Եվրոպան խաղաղության աղբյուր հանդիսանա՝ բաց լինելով այլ երկրների հետ երկխոսության ու համագործակցության համար, ողջունելով փոխանակումներն ու մասնակցելով ապագայի մարտահրավերների համատեղ պատասխանների որոնմանը:

### **Անվտանգություն**

Ժողովրդավարության ամրապնդումն ու անվտանգության բարելավումը բարենպաստ անդրադարձ կունենան մեր բարեկամական հարաբերությունների վրա:

Մենք ողջունում ենք մասնակից քսաներկու պետությունների կողմից «Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրի» ստորագրումը, որը կհանգեցնի զինված ուժերի քանակների նվազեցման: Մենք հաստատում ենք «Վստահության և անվտանգության ամրապնդման միջոցներ» նոր փաթեթի ընդունումը, որ կհանգեցնի մասնակից բոլոր պետությունների միջև թափանցիկության և վստահության աճին: Դրանք Եվրոպայում կայունության և անվտանգության ամրապնդման ուղղությամբ կատարվող կարևոր քայլեր են:

«Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրի գործողության» արդյունքում զինված ուժերի մակարդակի աննախադեպ կրճատումը, զուգակցվելով ԵԱՀԽ գործընթացի շրջանակներում անվտանգության ու համագործակցության նկատմամբ նոր մոտեցումներին, կհանգեցնի Եվրոպայում անվտանգության մի նոր ըմբռնման և մեր հարաբերությունների նոր մակարդակի: Այս համատեքստում մենք լիովին ճանաչում ենք պետությունների՝ անվտանգության ապահովման իրենց մոտեցումներն ընտրելու ազատությունը:

### **Միասնություն**

Ամբողջական և ազատ Եվրոպան նոր նախաձեռնության կոչ է անում: Մենք մեր ժողովուրդներին հրավիրում ենք՝ մասնակցելու այդ վեհ գործին:

Մենք մեծ գոհունակությամբ ենք նշում Գերմանիայի առնչությամբ վերջնական կարգավորման մասին պայմանագիրը, որն ստորագրվել է Մոսկվայում 1990 թվականի սեպտեմբերի 12-ին, և անկեղծորեն ողջունում ենք այն փաստը, որ գերմանացի ժողովուրդը միավորվեց մեկ պետության մեջ՝ Եվրոպայում անվտանգության ու համագործակցության խորհրդա-ժողովի Եզրափակիչ ակտի սկզբունքներին համապատասխան և իր հարևանների լիակատար համաձայնությամբ: Գերմանիայի ազգային միասնության հաստատումը կարևոր ներդրում է՝ կայունության, խաղաղության ու համագործակցության ոլորտում իր պատասխանատվությունը գիտակցող միավորված, ժողովրդավարական Եվրոպայի համար արդարացի ու կայուն խաղաղության հաստատման գործում:

Ինչպես հյուսիսամերիկյան, այնպես էլ եվրոպական պետությունների մասնակցությունը ԵԱՀԽ-ի դրա հիմնարար հատկանիշ է. դա ընկած է անցյալի նվաճումների հիմքում և էական նշանակություն ունի ԵԱՀԽ գործընթացի ապագայի համար: Անփոփոխ նվիրվածությունը մեր որդեգրած արժեքներին և մեր ընդհանուր ժառանգությունը այն օղակներն են, որոնք մեզ միմյանց են շաղկապում: Մեր ժողովուրդների հարուստ բազմազանությամբ հանդերձ՝ մենք միասնական ենք բոլոր բնագավառներում համագործակցությունն ընդլայնելու

մեր նվիրվածությամբ: Մեզ դիմագրավող մարտահրավերները կարող են լուծվել միայն համատեղ գործողություններով, համագործակցությամբ և համերաշխությամբ:

### **ԵԱՀԽ-ն և աշխարհը**

Մեր և մյուս երկրների ճակատագրերը կապված են միմյանց: Մենք լիովին աջակցում ենք Միավորված ազգերի կազմակերպությանը և նրա դերի մեծացմանը՝ միջազգային խաղաղության, անվտանգության ու արդարությանը սատարելու գործում: Մենք վերահաստատում ենք մեր նվիրվածությունը Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված սկզբունքներին ու նպատակներին և դատապարտում այդ սկզբունքների ցանկացած խախտում: Մենք գոհունակությամբ ենք ընդունում համաշխարհային հարաբերություններում Միավորված ազգերի կազմակերպության աճող դերն ու դրա արդյունավետության մեծացումը, ինչին նպաստում է մեր պետությունների փոխհարաբերությունների բարելավումը:

Տեղյակ լինելով աշխարհի մեծագույն մասի անհետաձգելի կարիքներին՝ մենք պարտավորվում ենք համերաշխ լինել մյուս բոլոր երկրների հետ: Ուստի, այսօր մենք Փարիզից կոչով դիմում ենք աշխարհի բոլոր երկրներին: Մենք պատրաստ ենք միավորել ջանքերը յուրաքանչյուր պետության և բոլոր պետությունների հետ՝ մարդկային հիմնարար արժեքների ամբողջությունը պաշտպանելու և հաստատելու համար:

Ելնելով ԵԱՀԽ բոլոր սկզբունքների և դրույթների լիակատար կիրարկմանը մեր հաստատված հավատարմությունից՝ մենք այժմ որոշում ենք նոր ազդակ հաղորդել մեր համագործակցության հավասարակշռված ու համակողմանի զարգացմանը՝ մեր ժողովուրդների կարիքների և խղճերի բավարարման նպատակով:

### **Մարդկային ուղղություն**

Մենք հայտարարում ենք, որ մեր հարգանքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ անփոփոխ է: Մենք ամբողջությամբ կկիրարկենք ու կզարգացնենք մարդկային ուղղությանն առնչվող ԵԱՀԽ դրույթները:

Առաջնորդվելով Մարդկային ուղղության թեմայով Խորհրդաժողովի՝ Կոպենհագենի հանդիպման փաստաթղթով՝ մենք կհամագործակցենք ժողովրդավարական հաստատություններն ամրապնդելու և իրավունքի գերակայությունն ապահովելու նպատակով: Այդ նպատակով մենք որոշում ենք փորձագետների սեմինար անցկացնել Օսլոյում 1991 թվականի նոյեմբերի 4-15-ը:

Մեր հասարակությունների կյանքում ազգային փոքրամասնությունների հարուստ ներդրմանը նպաստելու վճռականությամբ համակված՝ մենք պարտավորվում ենք հետագայում էլ բարելավել նրանց վիճակը: Մենք վերահաստատում ենք մեր այն խորին համոզմունքը, որ մեր ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունները, ինչպես նաև խաղաղությունը, արդարությունը, կայունությունն ու ժողովրդավարությունը պահանջում են ազգային փոքրամասնությունների էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական ինքնության պաշտպանություն և դրա խրախուսման համար պայմանների ստեղծում: Մենք հայտարարում ենք, որ ազգային փոքրամասնություններին վերաբերող հարցերը կարող են գոհացուցիչ կերպով լուծվել միայն ժողովրդավարական քաղաքականության շրջանակներում: Մենք այնուհետև ընդունում ենք, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքները պետք է ամբողջությամբ հարգվեն՝ որպես համընդհանուր մարդու իրավունքների մի մաս: Գիտակցելով ազգային փոքրամասնություններին վերաբերող հարցերում համագործակցությունն ընդլայնելու, ինչպես նաև նրանց պաշտպանությունը բարելավելու անհետաձգելի անհրաժեշտությունը՝ մենք որոշում ենք ազգային փոքրամասնությունների խնդիրներին նվիրված փորձագետների հանդիպում անցկացնել Ժնևում, 1991 թվականի հուլիսի 1-19-ը:

Մենք արտահայտում ենք մեր վճռականությունը՝ պայքարելու ռասայական և էթնիկական ատելության, հրեատյացության, այլատյացության և յուրաքանչյուրի նկատմամբ

խտրականության բոլոր ձևերի, ինչպես նաև կրոնական ու գաղափարախոսական հիմքով հետապնդման դեմ:

ԵԱՀԽ-ի առջև ստանձնած մեր պարտավորություններին համապատասխան՝ մենք ընդգծում ենք, որ մեր քաղաքացիների ազատ տեղաշարժը և նրանց միջև շփումները, ինչպես նաև տեղեկատվության ու գաղափարների ազատ հոսքն առանցքային նշանակություն ունեն ազատ հասարակությունների և ծաղկող մշակույթների պահպանման ու զարգացման համար: Մենք ողջունում ենք զբոսաշրջության զարգացումը և փոխալսելությունները մեր երկրների միջև:

Մարդկային ուղղության մեխանիզմն ապացուցել է իր օգտակարությունը, ուստի մենք լի ենք այն ընդլայնելու վճռականությամբ՝ նոր ընթացակարգեր ընդգրկելու նպատակով, որոնց թվում են, մասնավորապես, այն փորձագետների կամ մի շարք ակնավոր գործիչների ծառայությունները, որոնք փորձ ունեն մարդու իրավունքների այնպիսի հարցերում, որոնք կարող են արժարժվել տվյալ մեխանիզմի շրջանակներում: Սույն մեխանիզմի համատեքստում մենք կապահովենք առանձին անձանց մասնակցությունը իրենց իրավունքների պաշտպանությանը: Այսպիսով, մենք հաստատում ենք մեր հավատարմությունն այդ բնագավառում, մասնավորապես, Մարդկային ուղղության թեմայով Խորհրդածողովի Մոսկվայի հանդիպմանը մեր ստանձնած պարտավորությունների հետագա ընդլայնմանը՝ չխախտելով միջազգային այն փաստաթղթերով ստանձնած պարտավորությունները, որոնց մասնակից կարող են լինել մեր պետությունները:

Մենք ընդունում ենք Եվրոպայի խորհրդի կարևոր ներդրումը մարդու իրավունքների և ժողովրդավարության ու իրավունքի գերակայության սկզբունքներին նպաստելու, ինչպես նաև մշակույթի բնագավառում համագործակցությունը զարգացնելու գործում: Մենք ողջունում ենք Եվրոպայի խորհրդին անդամակցելու և նրա՝ Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեի համար միանալու նպատակով մասնակից որոշ պետությունների ձեռնարկած քայլերը: Մենք նաև ողջունում ենք Եվրոպայի խորհրդի պատրաստակամությունը՝ իր փորձը ԵԱՀԽ-ին փոխանցելու առնչությամբ:

## Անվտանգություն

Եվրոպայում քաղաքական և ռազմական փոփոխվող միջավայրը համատեղ ջանքեր գործադրելու նոր հնարավորություններ է բացում ռազմական անվտանգության բնագավառում: Մենք կզարգացնենք այն կարևոր նվաճումները, որոնց հաջողվեց հասնել «Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին» պայմանագրում և Վստահության ու անվտանգության ամրապնդման միջոցների (ՎԱԱՄ) շուրջ բանակցություններում: Մենք պարտավորվում ենք շարունակել ՎԱԱՄ-ի շուրջ բանակցությունները նույն մանդատով և ձգտել ավարտել դրանք 1992 թվականին Հելսինկիում կայանալիք ԵԱՀԽ հաջորդ հանդիպումից ոչ ուշ: Մենք նաև ողջունում ենք շահագրգիռ մասնակից պետությունների որոշումը՝ շարունակել «Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին» պայմանագրի շուրջ բանակցությունները նույն մանդատով և ձգտել դրանք ավարտել Հելսինկիում կայանալիք հաջորդ հանդիպումից ոչ ուշ: Ազգային մակարդակով նախապատրաստական աշխատանքներից հետո մենք անվտանգության հարցերում ակնկալում ենք մասնակից բոլոր պետությունների կառուցվածքային առումով ավելի կազմակերպված համագործակցություն, ինչպես նաև մասնակից երեսունչորս պետությունների քննարկումներ ու խորհրդակցություններ, որոնք միտված կլինեն Հելսինկիի հաջորդ հանդիպումից հետո՝ մինչև 1992 թվականը, զինաթափման և վստահության ու անվտանգության ամրապնդման առնչությամբ նոր բանակցություններ սկսելուն, որոնք բաց կլինեն մասնակից բոլոր պետությունների համար:

Մենք կոչ ենք անում հնարավորինս շուտ կնքել քիմիական զենքի արգելման մասին կոնվենցիան՝ լիակատար, համապարփակ և արդյունավետ ստուգման մեխանիզմով, և մենք մտադիր ենք դառնալ այն առաջինը ստորագրող երկրները:

Մենք վերահաստատում ենք «Բաց երկինքներ» նախաձեռնության անհրաժեշտությունը և կոչ անում հնարավորինս շուտ հաջողությամբ ավարտել այդ բանակցությունները:

Թեև Եվրոպայում հակամարտության սպառնալիքը նվազել է, այդուհանդերձ, մեր հասարակությունների կայունությանն այլ վտանգներ են սպառնում: Մենք մտադիր ենք համագործակցել ժողովրդավարական հաստատություններն այնպիսի գործողություններից պաշտպանելու գործում, որոնք խախտում են մասնակից պետությունների անկախությունը, ինքնիշխան հավասարությունը կամ տարածքային ամբողջականությունը: Դրանցից են անօրինական այն գործողությունները, որոնք ներառում են արտաքին ճնշումը, հարկադրումն ու քայքայիչ գործունեությունը:

Մենք անվերապահորեն դատապարտում ենք, որպես հանցագործություն, ահաբեկչության բոլոր գործողությունները, եղանակներն ու գործելակերպը և արտահայտում երկկողմ և բազմակողմ համագործակցության միջոցով այն արմատախիլ անելու մեր վճռականությունը: Մենք կմիավորվենք նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում:

Գիտակցելով, որ ուժի կիրառումից կամ ուժի կիրառման սպառնալիքից ձեռնպահ մնալու՝ պետությունների պարտականությունների էական լրացում է վեճերի խաղաղ կարգավորումն, ընդ որում՝ այդ երկուսն էլ կարևոր գործոններ են միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման և ամրապնդման համար՝ մենք ոչ միայն արդյունավետ ուղիներ կորոնենք քաղաքական միջոցներով հնարավոր հակամարտությունները կանխելու համար, այլև կսահմանենք, միջազգային իրավունքի համաձայն, հնարավոր վեճերի խաղաղ կարգավորման համապատասխան մեխանիզմները: Հետևաբար, մենք պարտավորվում ենք այս հարցում փնտրել համագործակցության նոր ձևեր, մասնավորապես՝ վեճերի խաղաղ կարգավորման եղանակների մի խումբ՝ ներառյալ երրորդ կողմի պարտադիր ներգրավումը: Մենք ընդգծում ենք, որ այս համատեքստում անհրաժեշտ է լիովին օգտագործել Վեճերի խաղաղ կարգավորմանը նվիրված հանդիպման հնարավորությունները, որ տեղի կունենա Վալետայում 1991 թվականի սկզբներին: Արտաքին գործերի նախարարների խորհուրդը հաշվի կառնի Վալետայի հանդիպման զեկույցը:

### **Տնտեսական համագործակցություն**

Մենք ընդգծում ենք, որ շուկայական տնտեսության վրա հիմնված տնտեսական համագործակցությունը մեր հարաբերությունների էական տարրն է, և այն կնպաստի բարգավաճող ու միասնական Եվրոպայի կառուցմանը: Ժողովրդավարական հաստատություններն ու տնտեսական ազատությունը խթանում են տնտեսական ու սոցիալական առաջընթացը, ինչպես նշվում է Տնտեսական համագործակցության՝ Բոննի խորհրդաժողովի փաստաթղթում, որի արդյունքներին հայտնում ենք մեր վճռական աջակցությունը:

Մենք ընդգծում ենք, որ տնտեսության բնագավառում, գիտության ու տեխնիկայի հարցերում համագործակցությունը ներկայումս ԵԱՀԽ կարևոր հենասյուն է: Մասնակից պետությունները պետք է պարբերաբար ուսումնասիրեն առաջընթացն այդ բնագավառում և նոր ազդակներ հաղորդեն այդ ոլորտներում:

Մենք համոզված ենք, որ անհրաժեշտ է ընդլայնել մեր ընդհանուր տնտեսական համագործակցությունը, խրախուսել ազատ ձեռնարկատիրությունը, ընդլայնել և զանազանեցնել առևտուրը՝ Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրի (ՄԱԳՀ) կանոններին համապատասխան: Մենք կնպաստենք սոցիալական արդարությանն ու առաջընթացին, ինչպես նաև կօժանդակենք մեր ժողովուրդների բարեկեցությունը: Այս համատեքստում մենք ընդունում ենք գործազրկության խնդրի կարգավորմանը նպատակաուղղված արդյունավետ քաղաքականության կարևորությունը:

Մենք վերահաստատում ենք, որ անհրաժեշտ է շարունակել աջակցել ժողովրդավարական երկրներին շուկայական տնտեսության անցնելու և սեփական ուժերով տնտեսական ու սոցիալական աճի հիմքեր ստեղծելու հարցում, ինչպես դա արդեն պարտավորվել է անել 24 երկրների խումբը: Մենք ընդգծում ենք նաև միջազգային տնտեսական ու ֆինանսական համակարգին նրանց ավելի խորն ինտեգրման անհրաժեշտությունը՝ ներառելով ինչպես կարգապահության, այնպես էլ արտոնությունների ընդունումը:

Մենք գտնում ենք, որ ԵԱՀԽ գործընթացի շրջանակներում տնտեսական համագործակցությանն ավելի մեծ ուշադրություն դարձնելիս պետք է հաշվի առնել մասնակից զարգացող պետությունների շահերը:

Մենք հիշեցնում ենք մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները հարգելու ու դրանց աջակցելու և գիտական առաջընթացի միջև փոխկապակցվածությունը: Համագործակցությունը գիտության ու տեխնիկայի բնագավառում էական դեր կխաղա տնտեսական և սոցիալական զարգացման գործում: Ուստի այն պետք է զարգանա գիտատեխնիկական համապատասխան տեղեկատվության և գիտելիքների ավելի մեծ փոխանակման ուղղությամբ՝ հաղթահարելու համար մասնակից պետությունների միջև տեխնոլոգիական բացը: Մենք մասնակից պետություններին խրախուսում ենք փոխգործակցել նաև մարդկային ներուժի և ազատ ձեռնարկատիրության ոգու (հիմնական տեքստում հենց այսպես է, գուցե կարելի է ընդհանրապես ջնջել ոգու բառը, բայց ես դա չեի անի: մտածել եմ նաև ջիդ օգտագործել, բայց գտա, որ չի համապատասխանի հիմնական տեքստին) զարգացման նպատակով:

Մենք լի ենք վճռականությամբ՝ անհրաժեշտ ազդակ հաղորդելու էներգետիկայի, տրանսպորտի և զբոսաշրջության բնագավառում մեր պետությունների համագործակցությանը՝ ի շահ տնտեսական ու սոցիալական զարգացման: Մենք, մասնավորապես, ողջունում ենք էներգետիկ ռեսուրսների՝ տնտեսագիտորեն նպատակահարմար ու խելամիտ զարգացման համար լավագույն պայմաններ ստեղծելու գործնական քայլերը՝ պատշաճ կերպով հաշվի առնելով բնապահպանական գործոնները:

Մենք ճանաչում ենք Եվրոպական համայնքի կարևոր դերը Եվրոպայի քաղաքական ու տնտեսական զարգացման գործում: Միջազգային տնտեսական կազմակերպությունները, ինչպիսիք են Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովը (ՄԱԿ-ի ԵՏՀ), Բրետոն-Վոդյան հաստատությունները, Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ), Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիան (ԱԱԵԱ) և Առևտրի միջազգային պալատը (ԱՄՊ), կարևոր խնդիր են կատարում տնտեսական համագործակցությանը սատարելու գործում, որը հետագա զարգացում կստանա Վերակառուցման ու զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) ստեղծմամբ: Մեր նպատակներին հասնելու համար մենք ընդգծում ենք այդ կազմակերպությունների աշխատանքների արդյունավետ համակարգման անհրաժեշտությունը և ընդգծում ենք այդ աշխատանքներին մեր բոլոր պետությունների մասնակցության եղանակներ գտնելու անհրաժեշտությունը:

### **Շրջակա միջավայր**

Մենք ընդունում ենք շրջակա միջավայրի խնդիրների լուծման անհետաձգելի անհրաժեշտությունը և այդ բնագավառում անհատական ու համատեղ ջանքեր գործադրելու կարևորությունը: Մենք պարտավորվում ենք աշխուժացնել շրջակա միջավայրը պաշտպանելուն և բարելավելուն ուղղված մեր ջանքերը՝ մթնոլորտում, ջրում և հողում բնապահպանական կայուն հավասարակշռությունը վերականգնելու և պահպանելու նպատակով: Ուստի մենք լի ենք վճռականությամբ՝ լիովին օգտագործելու ԵԱՀԽ-ն՝ որպես շրջակա միջավայրի բնագավառում համընդհանուր պարտավորությունների ու նպատակների մշակման կառույց, այդ կերպ շարունակելով այն աշխատանքը, որի արդյունքներն արտացոլված են Շրջակա միջավայրի պաշտպանությանը նվիրված՝ Մոֆիայի հանդիպման զեկույցում:

Մենք ընդգծում ենք լավ տեղեկացված հասարակության նշանակալի դերը, որը հասարակությանը և առանձին անհատներին հնարավորություն է տալիս հանդես գալու շրջակա միջավայրը բարելավելու նախաձեռնություններով: Դրա համար մենք պարտավորվում ենք նպաստել շրջակա միջավայրի բնագավառում հանրային իրազեկմանն ու կրթմանը, ինչպես նաև տեղեկացնել հանրությանը շրջակա միջավայրի վրա քաղաքականության, նախագծերի ու ծրագրերի ազդեցության մասին:



Մենք առաջնահերթ նշանակություն ենք տալիս մաքուր և սակավաթափոն տեխնոլոգիաների ներդրմանը՝ գիտակցելով այն երկրներին աջակցելու անհրաժեշտությունը, որոնք առայժմ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու սեփական միջոցներ չունեն:

Մենք ընդգծում ենք, որ բնապահպանական քաղաքականության արդյունավետ իրականացումն ապահովելու համար այն պետք է ամրապնդվի համապատասխան օրենսդրական միջոցներով և վարչական կառույցներով:

Մենք ընդգծում ենք նոր միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը, որոնք կապահովեն առկա պարտավորությունների կատարման պարբերական գնահատումը, նաև՝ շրջակա միջավայրի վիճակի և բնապահպանական հնարավոր վտանգների մասին ծանուցման և տեղեկությունների փոխանակման ավելի հեռահար պարտավորությունների մշակումը: Մենք նաև ողջունում ենք Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության (ՇՄԳ) ստեղծումը:

Մենք ողջունում ենք այն օպերատիվ աշխատանքները, կոնկրետ խնդիրներին ուղղված հետազոտությունները և քաղաքականության տեսությունները, որ իրականացվում են շրջակա միջավայրի պաշտպանությամբ զբաղվող միջազգային այնպիսի կազմակերպություններում, ինչպիսիք են Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագիրը (ՄԱԿ-ի ՇՄԾ), Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովը (ՄԱԿ-ի ԵՏՀ) և Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ): Մենք ընդգծում ենք նրանց համագործակցության ամրապնդման և արդյունավետ համակարգման անհրաժեշտությունը:

## **Մշակույթ**

Մենք ընդունում ենք մայրցամաքում պառակտումը հաղթահարելու գործում մեր ընդհանուր եվրոպական մշակույթի և մեր որդեգրած արժեքների կարևորագույն ներդրումը: Ուստի մենք ընդգծում ենք մեր հավատարմությունը ստեղծագործական ազատությանը, ինչպես նաև մշակութային և հոգևոր մեր ժառանգության պաշտպանությանն ու զարգացմանը իր ողջ հարստությամբ ու բազմազանությամբ:

Նկատի ունենալով Եվրոպայում վերջերս տեղի ունեցած փոփոխությունները՝ մենք ընդգծում ենք Կրակովի գիտաժողովի աճող նշանակությունը և ակնկալում այդ գիտաժողովի ընթացքում մշակույթի բնագավառում ինտենսիվ համագործակցության հիմնական ուղեցիկների վերաբերյալ քննարկում: Մենք Եվրոպայի խորհրդին հորդորում ենք աջակցել այդ գիտաժողովին:

Մեր ժողովուրդների ավելի խորը փոխադարձ ճանաչմանը նպաստելու նպատակով մենք հանդես ենք գալիս մասնակից մյուս պետությունների քաղաքներում մշակութային կենտրոններ ստեղծելու, ինչպես նաև տեսալսողական բնագավառում ավելի խորը համագործակցության և երաժշտության, թատրոնի, գրականության ու արվեստի ոլորտներում ավելի լայն շփումների օգտին:

Մենք որոշում ենք մեր ազգային քաղաքականության մեջ հատուկ ջանքեր գործադրել, մասնավորապես՝ երիտասարդության շրջանում, ավելի խորը փոխըմբռնմանը նպաստելու համար մշակութային շփումների, կրթության բոլոր ոլորտներում համագործակցելու և, ավելի կոնկրետ, մասնակից պետությունների լեզուներով դասավանդման ու վերապատրաստման միջոցով: Մենք մտադիր ենք այդ գործունեության առաջին արդյունքները քննարկել 1992 թվականին՝ Հելսինկիում կայանալիք մեր հաջորդ հանդիպման ընթացքում:

## **Միգրանտ աշխատողներ**

Մենք ընդունում ենք, որ ընդունող երկրներում օրինական կարգով բնակվող միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների խնդիրները տնտեսական, մշակութային ու սոցիալական բնույթի են, ինչպես նաև ունեն իրենց մարդկային ուղղությունը: Մենք վերահաստա-

տում ենք, որ նրանց իրավունքների պաշտպանությունը և խրախուսումը, ինչպես նաև համապատասխան միջազգային պարտավորությունների կատարումը մեր ընդհանուր գործն է:

### **Միջերկրածովյան տարածաշրջան**

Մենք գտնում ենք, որ Եվրոպայում տեղի ունեցած հիմնական քաղաքական փոփոխությունները դրական նշանակություն ունեն միջերկրածովյան տարածաշրջանի համար: Այդ պատճառով մենք կշարունակենք ջանքերը՝ ամրապնդելու համար միջերկրածովյան տարածաշրջանում անվտանգությունն ու համագործակցությունը՝ որպես Եվրոպայի կայունության կարևոր գործոն: Մենք ողջունում ենք միջերկրածովյան տարածաշրջանին նվիրված՝ Պալմա դե Մայորկայի հանդիպման ընթացքում ընդունված զեկույցը, որի արդյունքները մենք բոլորս սատարում ենք:

Մենք մտահոգված ենք այդ տարածաշրջանում պահպանվող լարվածությամբ և վերստին հայտարարում ենք, որ վճռական ենք աշխուժացնելու ջանքերը՝ Եգրափակիչ ակտի սկզբունքների հիման վրա խաղաղ միջոցներով, չկարգավորված առանցքային խնդիրների՝ արդարացի, կենսունակ և տևական լուծումներ գտնելու ուղղությամբ:

Մենք ցանկանում ենք օժանդակել միջերկրածովյան ոչ մասնակից պետությունների հետ հարաբերությունների ներդաշնակ զարգացման և դրանց զանազանեցման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը: Մեր նպատակն այդ պետությունների հետ համագործակցության ընդլայնումն է, որը նպատակամղված կլինի տնտեսական ու սոցիալական զարգացմանն օժանդակելուն և տարածաշրջանում կայունությունն ամրապնդելուն: Այդ նպատակով այդ երկրների հետ մեկտեղ մենք կձգտենք նշանակալիորեն կրճատել այն խզումը, որ բարեկեցության առումով առկա է Եվրոպայի և նրա միջերկրածովյան հարևանների միջև:

### **Ոչ կառավարական կազմակերպություններ**

Մենք հիշեցնում ենք այն կարևոր դերը, որ ոչ կառավարական կազմակերպությունները, կրոնական և մյուս խմբերն ու անհատները կատարել են ԵԱՀԽ նպատակներին հասնելու ուղղությամբ, և հետագայում էլ աջակցելու ենք ԵԱՀԽ-ի առջև մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունների իրականացմանն ուղղված նրանց գործունեությանը: Իրենց կարևոր խնդիրը կատարելու համար այդ կազմակերպությունները, խմբերն ու անհատները պետք է պատշաճ կերպով ներգրավվեն ԵԱՀԽ աշխատանքներում և մոր կառույցներում:

### **ԵԱՀԽ գործընթացի մոր կառույցներն ու հաստատությունները**

Մարդու իրավունքների նկատմամբ հարգանքին, ժողովրդավարության ու իրավունքի գերակայության ապահովմանը, խաղաղության ամրապնդմանն ու Եվրոպայի միասնությանը աջակցելուն ուղղված մեր համատեղ ջանքերի համար պահանջվում են քաղաքական երկխոսության ու համագործակցության մոր որակ և այդ ճանապարհով ԵԱՀԽ կառույցների զարգացում:

Մեր ապագա հարաբերությունների ձևավորման գործում առաջնահերթ նշանակություն ունի բոլոր մակարդակներում մեր խորհրդակցությունների աշխուժացումը: Այդ նպատակով մենք որոշում ենք.

Մենք՝ պետությունների կամ կառավարությունների ղեկավարներս, հաջորդ անգամ կհանդիպենք Հելսինկիում՝ 1992 թվականի ԵԱՀԽ հանդիպմանը: Այնուհետև մենք կհավաքվենք հաջորդ հանդիպումներին՝ հետագա քայլերի շրջանակներում:

Մեր արտաքին գործերի նախարարները, որպես Խորհուրդ, կանոնավոր հանդիպումներ կանցկացնեն տարեկան առնվազն մեկ անգամ: Այդ հանդիպումները կդիտարկվեն որպես կենտրոնական համաժողով ԵԱՀԽ գործընթացի շրջանակներում քաղաքական խորհր-

դակցությունների համար: Խորհուրդը կքննարկի Եվրոպայում անվտանգության ու համագործակցության խորհրդաժողովին առնչվող հարցեր և համապատասխան որոշումներ կկայացնի:

Խորհրդի առաջին հանդիպումը տեղի կունենա Բեռլինում:

Բարձրաստիճան պաշտոնյաների կոմիտեն կնախապատրաստի Խորհրդի նիստերը և կկատարի դրա որոշումները: Կոմիտեն կամփոփի ընդհանուր հարցերը և կարող է համապատասխան որոշումներ ընդունել, այդ թվում՝ Խորհրդին հասցեագրված առաջարկությունների տեսքով:

Անհետաձգելի հարցերի քննարկման համար կարող է ձեռք բերվել մասնակից պետությունների ներկայացուցիչների լրացուցիչ հանդիպումներ անցկացնելու պայմանավորվածություն:

Խորհուրդը կուսումնասիրի արտակարգ իրավիճակներում Բարձրաստիճան պաշտոնյաների կոմիտեի նիստեր գումարելու վերաբերյալ դրույթների մշակման հարցը:

Մասնակից պետությունները կարող են պայմանավորվել նաև այլ նախարարների հանդիպումներ անցկացնելու մասին:

Այդ խորհրդակցությունների ընթացքում վարչական հարցերում օժանդակություն ցուցաբերելու նպատակով մենք Պրահայում ստեղծում ենք Քարտուղարություն:

Հետագա քայլերի շրջանակներում մասնակից պետությունների հանդիպումները, որպես կանոն, կանցկացվեն երկու տարին մեկ անգամ, որպեսզի մասնակից պետություններին հնարավորություն տրվի ամփոփել զարգացումները, իրենց պարտավորությունների կատարումը, ինչպես նաև քննարկել հետագա քայլերը ԵԱՀԽ գործընթացի շրջանակներում:

Մենք որոշում ենք Վիեննայում ստեղծել Հակամարտությունների կանխարգելման կենտրոն՝ հակամարտությունների ծագման վտանգը նվազեցնելու հարցում Խորհրդին աջակցելու համար:

Մենք որոշում ենք Վարշավայում ստեղծել Ազատ ընտրությունների բյուրո՝ մասնակից պետությունների շփումներին և ընտրությունների մասին տեղեկատվության փոխանակման օժանդակելու համար:

Ընդունելով այն կարևոր դերը, որ խորհրդարանականները կարող են կատարել ԵԱՀԽ գործընթացում, մենք խորհրդարաններին կոչ ենք անում ավելի լայնորեն մասնակցել ԵԱՀԽ-ին, մասնավորապես՝ ԵԱՀԽ խորհրդարանական վեհաժողով ստեղծելու միջոցով, որում կընդգրկվեն մասնակից բոլոր պետությունների խորհրդարանների անդամներ: Այդ նպատակով մենք հաստատակամորեն կոչ ենք անում զարգացնել խորհրդարանական մակարդակով շփումները ԵԱՀԽ խորհրդարանական կառույցի գործունեության ոլորտների, աշխատանքային մեթոդների և ընթացակարգային կանոնների քննարկման համար՝ օգտագործելով այդ բնագավառում եղած փորձն ու արդեն կատարված աշխատանքը:

Մենք մեր արտաքին գործերի նախարարներին խնդրում ենք այդ հարցը քննարկել Խորհրդի կարգավիճակով կայանալիք իրենց անդրանիկ նիստում:

\* \* \*

Նոր Եվրոպայի համար Փարիզի խարտիայում ներառված որոշ դրույթներին վերաբերող ընթացակարգային ու կազմակերպական պայմանները շարադրված են Լրացուցիչ փաստաթղթում, որն ընդունվում է Փարիզի խարտիայի հետ միասին:

Մենք Խորհրդին հանձնարարում ենք ձեռնարկել հետագա այնպիսի քայլեր, որոնք կարող են պահանջվել սույն փաստաթղթի, ինչպես նաև Լրացուցիչ փաստաթղթում ներառված որոշումների կատարումն ապահովելու համար, և քննության առնել Եվրոպայում անվտանգության ու համագործակցության ամրապնդմանն ուղղված հետագա ջանքերի հարցը: Խորհուրդը կարող է Լրացուցիչ փաստաթղթում կատարել ցանկացած փոփոխություն, որ ինքն անհրաժեշտ կհամարի:

\* \* \*

Նոր Եվրոպայի համար Փարիզի խարտիայի բնօրինակը, որ կազմված է անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, ռուսերեն և իսպաներեն լեզուներով, կհանձնվի Ֆրանսիայի Հանրապետության Կառավարությանը, որն այն կպահի իր արխիվներում: Մասնակից պետություններից յուրաքանչյուրը Ֆրանսիայի Հանրապետության Կառավարությունից կստանա Փարիզի խարտիայի ճշգրիտ պատճենը:

Փարիզի խարտիայի տեքստը կիրապարակվի մասնակից յուրաքանչյուր պետությունում, որը կտարածի այն և կապահովի, որ հնարավորինս լայն շրջանակներ ծանոթանան դրան:

Մենք խնդրում ենք, որ Ֆրանսիայի Հանրապետության Կառավարությունը փոխանցի Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին Նոր Եվրոպայի համար Փարիզի խարտիայի տեքստը, որը, Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 102-րդ հոդվածի համաձայն, ենթակա չէ գրանցման, որպեսզի Գլխավոր քարտուղարն իր հերթին տարածի այն որպես պաշտոնական փաստաթուղթ Կազմակերպության բոլոր անդամների շրջանում:

Մենք նաև խնդրում ենք Ֆրանսիայի Հանրապետությանը, որ Փարիզի խարտիայի տեքստը փոխանցի նաև խարտիայում նշված մյուս բոլոր միջազգային կազմակերպություններին:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՎԵՐՈՆՇԱԼԻ՝ մենք՝ մասնակից պետությունների ներքոստորագրյալ Բարձր ներկայացուցիչներս, գիտակցելով քաղաքական այն կարևոր նշանակությունը, որ մենք տալիս ենք Գազաթնաժողովի արդյունքներին, և հայտարարելով, որ լի ենք մեր ընդունած դրույթներին համապատասխան գործելու վճռականությամբ, մեր ստորագրությունները դրեցինք սույն փաստաթղթի տակ:

**Կատարված է Փարիզում  
1990 թ. նոյեմբերի 21-ին:**